Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
մայիսի 8-ի N 570 - Ն որոշման

«Հավելված N 14
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ-ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՎԻ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են առանց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ստորաբաժանում ներկայանալու տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում (այսուհետ՝ հարթակ) գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կարող են կատարել բանկերը, վարկային և գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն)՝ այդ գործողության պահի դրությամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և (կամ) հաշվառում ունեցող տրանսպորտային միջոցների հետ կապված գործարքներով:

2. ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՎԻ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

3. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը կատարելու համար անհրաժեշտ է ընտրել

«Իրավաբանական անձանց մուտք» դաշտը: Դաշտը հասանելի է ինչպես կազմակերպության ղեկավարի, այնպես էլ՝ վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն ներկայացված լիազորագրում նշված կազմակերպության աշխատակիցների նույնականացման քարտի միջոցով մուտք գործելու դեպքում:

4. Կազմակերպության ղեկավարը կարող է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն ներկայացված դիմումով ներկայացնել կազմակերպության այն աշխատակիցներին, ովքեր լիազորված են հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորությամբ՝ դիմումում նշելով (կցելով նույնականացման քարտի պատճենը) վերջիններիս նույնականացման քարտի տվյալները:

5. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորություն ունեցող անձի փոփոխության դեպքում կազմակերպության ղեկավարը դիմում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն՝ հարթակում նոր տվյալներով կարգավորումներ կատարելու նպատակով:

6. Ընտրելով «Գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում» կոճակը՝ լրացվում է էլեկտրոնային դիմումը (այսուհետ՝ դիմում), որին կցվում են օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

7. Դիմումը լրացվում է համապատասխան դաշտերում պահանջվող տվյալները մուտքագրելու միջոցով՝ հետևելով կայքի հրահանգներին:

8. Լրացված դիմումը հաստատվում է կազմակերպության ղեկավարի կամ հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

9. Ներկայացված դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով

վարձակալության իրավունքի պետական գրանցում, ինչի արդյունքում կազմակերպության հարթակի էջին կամ դիմումով ներկայացված էլեկտրոնային հասցեին անմիջապես ուղարկվում է «Տրանսպորտային միջոցի գրավի (լիզինգի պայմանագրով վարձակալության) իրավունքի պետական գրանցման» վկայականի էլեկտրոնային տարբերակը:

10. Տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը մերժվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

11. Տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին որոշումը կայացնելու դեպքում այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ